

ՄԵՐՄՆԱԲՈՒԾՈՒԹՅՈՒՆ



Մեր մնաբուծության հիմնական օբյեկտը սորտն է: Սորտ կոչվում է կենսաբանական տնտեսական միանման հատկանիշներով ու հատկություններով օժտված բույսերի խումբը, որը կարող է մշակվել որոշակի հողկլմիայական պայմաններում և կոչված է ծառայելու կոնկրետ տնտեսական նպատակների:

Սորտերը լինում են տեղական և սելեկցիոն

Հիբրիդը ժառանգականորեն տարասեռ ծնողական ձևերի խաչասերումն է: Հիբրիդները լինում են բնական և արհեստական: Բնական հիբրիդները առաջանում են բնության մեջ, իսկ արհեստականները՝ մարդու միջամտությամբ: Հիբրիդային առաջին սերունդը, արտաքինից լրիվ համասեռ է, իսկ երկրորդ և հաջորդող սերունդներում դիտվում է նոր հատկանիշներ և հատկություններ:

Նորմատիվ պահանջների համաձայն սերմերի սորտային և ցանքային որակը դասակարգվում է հետևյալ դասերի՝

1. Նախահիմնային

2. Հիմնային սերմեր (սուպեր էլիտա, էլիտա)

3. Սերմնային նպատակով վերարտադրվող հավաստագրված սերմեր (I և II)

4. Ապրանքային արտադրանքի արտադրության նպատակով վերարտադրվող սերմեր

Աշնանացան ցորենի սերմերի սորտային
ստանդարտով սահմանվող սորտային և որակի
ցուցանիշները



Աշնանացան ցորենի սերմերի սորտային ստանդարտով սահմանվող սորտային և որակի ցուցանիշները

ՄԵՐՍԸ	ՍՈՐՏԱՅԻՆ ՄԱՔՐՈՒԹՅՈՒՆ %	ՀԻՄՆԱԿԱՆ ՄԱՔՐՈՒԹՅՈՒՆ %	ԾՆՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ %
ՕՐԻԳԻՆԱԼ	99.7	99	92
ԷԼԻՏԱՅԻՆ	99.7	99	92
ՎԵՐԱՐՏԱԴՐՎՈՂ ՄԵՐՄՆԱՅԻՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ	98	98	92
ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՑԱՆՔՄԻ ՀԱՄԱՐ	95	97	87

Մերմերի հազար հատիկի քաշը ստանդարտով չի սահմանվում, ինչի համար անհրաժեշտ է իմանալ այդ ցուցանիշը, որի շնորհիվ էլ որոշվում է ցանքի նորման: Ցանքի նորման որոշելու համար պետք է օգտվել հետևյալ բանաձևից`

$$\mathcal{N} = \frac{\text{Ք} \times \text{Բ} \times 100}{1000 \times \text{Ց.այ}}$$

որտեղ`

Ն-ն` ցանքի նորման է ,(կգ)

Ք-ն` մեկ հա վրա ցանվող ծլունակ հատիկների քանակը, (հատ)


Բ-ն` 1000 հատիկի կշիռը, (գ)

Ց.այ-ն` հատիկային ցանքային պիտանելիության մակարդակը(%)

Ք-ն ընդունում ենք 5 մլն հատ

Ցանքային պիտանելությունը որոշում են հետևյալ բանաձևով

$$\text{Ց.այ} = \frac{\text{Մաքրություն} \times \text{Ծլունակություն}}{100}$$



Այն սերմացուն որն իր մաքրությամբ,
ծլունակությամբ, մոլախոտերի, վնասատուների
և հիվանդությունների հարուցիչներով չի
համապատասխանում պետական սերմնային
ստանդարտին համարվում է ոչ կոնդիցիոն:



Բարձր բերքատու և բերքի բարձր որակով
օժտված պատկելու և սնկային հիվանդությունների
հանդեպ դիմացկուն, տեղի պայմաններին
հարմարված սորտերի բուծումը հանդիսանում է
բերքատվության բարձրացման և
գյուղատնտեսական արտադրության զարգացման
հիմնական ուղին:

ԼՂՀ գյուղատնտեսության նախարարության
<<Սերմնաբուծության և սելեկցիոն
նվաճումների փորձարկման կենտրոն>> ՓԲԸ
սկսած 2002 թ-ից իրականացնում է
աշնանացան ցորենի, գարու, տրիտիկալեյի,
աշորայի, հլածուկի, եգիպտացորենի,
հատիկաբլիթի, յուղատու, տեխնիկական
և բանջարբուստանային մշակաբույսերի
պետական փորձարկումներ:









ԼՂՀ ՓՈՐՁԱՐԿՎԱԾ ՍԵՐՄԵՐԻ 1000 ՀԱՏԻԿԻ ՔԱՇՆ ԵՎ ԲԵՐՔԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ
2015-2016 թթ

No	Սորտի անվանումը	1000 հատիկի քաշը (գր)	Բերքատվություն (g/հա)
1	Պիոներ	30.0	72.6
2	Տաբոր	32.1	64.5
3	Քսենյա	28.1	62.7
4	Ռոստովչանկա	35.1	60.0
5	Տանախ	28.1	60.0
6	Սեյանկա	31.1	60.0
7	Ռուբեժ (գարի)	31.5	58.5
8	Եսաուլ	29.1	53.6
9	Դոբրոլնյա (գարի)	36.5	53.5
10	Յուկա	34.1	53.3
11	Սիրենա Օդեսկայա	37.1	50.0
12	Լիգա 1	25.1	50.0
13	Պետրովչանկա	26.1	45.8
14	Կրասնոդարսկայա 99	24.1	45.6
15	Ուկրաինկա Օդեսկայա	29.1	43.9
16	Յունոնա	27.1	42.4
17	Դոնսկոյ սյուրպրիզ	27.0	40.0

18	Գրոմ	30.1	40.0
19	Սիլա	25.1	40.0
20	Վասսա	33.1	38.9
21	Կատի	25.1	38.4
22	Իրիշկա	24.1	38.2
23	Երմակ	32.1	38.1
24	Պրիկունսկայա 141	36.1	36.5
25	Մոսկվիչ	29.0	35.8
26	Բեգոստայա 1	36.1	34.8
27	Ստանիչնայա	28.1	34.3
28	Աքսինիտ	23.1	34.0
29	Լյուբավա Օդեսկայա	23.1	32.0
30	Վիկտորիա Օդեսկայա	26.1	30.0
31	Սկարբնիցա	24.1	30.0
32	Պիսանկա	27.1	28.4
33	Պրիկունսկայա 140	31.1	24.3
34	Բրիգադա	30.0	23.7
35	Դոն 105	29.0	20.0
36	Կուրանտ	17.1	20.0

Ցանքի ճիշտ ժամկետները մեծ ազդեցություն են թողնում
բերքատվության վրա:

ԼՂՀ աշնանացան ցորենի ցանքը պետք է կատարել հետևյալ
ժամկետներում`

Բարձր լեռնային գոտի- 10.09 – 10.10

Միջին լեռնային գոտի- 30.09 - 30.10

Հարթավայրային գոտի – 30.09 – 15.11

ԼՂՀ գարնանանցան մշակաբույսերի(արևածաղիկ, սոյա, կտավատ, հնդկացորեն) ցանքը պետք է կատարել հետևյալ ժամկետներում`

Բարձր լեռնային գոտի- 01.05 – 30.05

Միջին լեռնային գոտի- 01.04- 30.05

Հարթավայրային գոտի – 15.03 – 15.05

ՀԱՐՑԱՇԱՐ

1. Սերժաբուծության էությունը և նպատակը:
2. Ի՞նչն է համարվում սերժաբուծության հիմնական օբյեկտ:
3. Ի՞նչ է սորտը: Որո՞նք են հիբրիդները և ինչո՞վ են տարբերվում սորտերից:
4. Աշնանացան մշակաբույսերի ցանքի օպտիմալ ժամկետները ԼՂՀ պայմաններում:
5. Գարնանացան մշակաբույսերի ցանքի օպտիմալ ժամկետները ԼՂՀ պայմաններում:
6. Հացահատիկային մշակաբույսերի սերմի ցանքի նորմայի որոշումը: